



91. ՀԼՐԵՂԵՆՆ ՈՒ ՀՈՂԱԾԻՆԸ

Ինքն ա, ինքն չի, մեր ախշարքի մնան մին կոճիւր ախշարք ա ինքն: Ըստեղ ապրիլիս ա ինքն Տնավիթ անըմով մին տղա: Ըստրա հերը ավչի յա ինքն, համա հենց էն օրը, եփ ծընվըմ ա Տնավիթը, հերը քինըմ ա ավի հու տուն չի կնիս, ղուրղուղուչի փայ ա ինքն: Մընմ են մեր ու որթի, իսկ հորիցը ժանանգութուն ա մընմ մին քոհնա ավադանլըղ, մին թվանգ, մին էլ մին բաբաթ ղանմալթի:

Վախտ ա աս կենըմ:

Եփ որ Տնավիթի տասներկու տըրեկանը թըմամըմ ա, ասըմ ա.—Ես մ՛հիկ մեծ եմ, ա՛ մեր, տո՛ւ վել՝ պառապ: Վախտն ա, որ տո՛ւ դինջանաս, ես ախշաղեմ: Իզ տու իմ հոր թվանգն ու ղանմալթին, ուզըմ եմ հորըս մնան ավչի տանոնամ:

Մերը ըղաչըմ ա, պըղատըմ ա, թն էտ պանն անիլ մի, հորըս անջալը քեզ էլ կըհըսնի, համա պան չի տո՛ւս կալիս: Տնավիթը ոնները մին չմըչկի մեչ ա տինըմ՝ չէ, որ չէ, պիտի ավչի տանոնամ: Մոր ճաւը կտըրվըմ ա, ծալքի տակիցը հանըմ ա մարթի թողած թվանգն ու ղանմալթին, արտասուներն աչկերին պաչըմ ա, տինըմ ճակատին, էդո օրթնանք մըրմընջալով տալիս տղին:

Տնավիթն էլ ա պաչըմ, տինըմ սըրտին, էդո ժանգից թմըզըմ ա հու ոչ ցիրեկը, ոչ էլ քչերը ծեռ չի քաչըմ: Ամման օր չո՛ւ ա քինըմ, գո՛ւլլա քցըմ նշանին, տանոնըմ ընենց մին լանգանթին գո՛ւլլա քցող, որ ո՛չ ղուչը օթմը, ո՛չ ալապազտրակը չո՛լմը, ո՛չ էլ մարալը քուրմը կարըմ չեն թն պըծընեն ընդրա գո՛ւլլիցը:

Մին օր էլ ավատեղից տո՛ւն կնիս կեկերի կողկոնձ ա լսըմ: Մոտ ա քինըմ, տեսնըմ ա մին պըրթպըրթոտ բող քուռոակ մըճըճվել ա քուրերի ղաթըմը, իսկ ընդրա չորս ղուլմը կեկերը նստոտած կեռիքնին են ղընջղընջըցնըմ:

Տնավիթի մեխկը կնիս ա, նշան ա փըռնըմ բո՛լոգի ամենաեքկա կեկին, ըսպանըմ: Մնացած կեկերը փախնըմ են:

Տնավիթը օքնըմ ա քուռոակին, քուլաղաթերիցը տո՛ւս պերըմ, իսկը քուռոակը բո՛ւրղան մարթի մնան ըսկսըմ ա խոսալը.—Շնորա-

կալ եմ քեզանից, դոճճա՛ղ ավչի, տո՛ւ ինձ մահից փրկեցիր, ըտա մհար էլ ես հուր-հավիդյան քե դուլլուդ կանեմ, պայց մին պան եմ խնթրում քեզանա. ոչ մինին ոչ մին տեղ ասես ոչ, թն ես մար-թի մնան խոսալ եմ գիղում, ես հըրեղեն եմ: Թնչնա չէ մարթիք քե տնազ կըտան, ինձ էլ դնփանդմը կըտինեն ու չիմմի առաչին թը-մաչի կըհանեն:

Տնվիթը հըրեղեն քուռոակին պերում ա տուն, մին կուճի կո՛ւ ա չինում, ճուր ու եմ տալիս, ընենց ա թիմնրում, որ մազերը փըսպղում են արծաթի պես: Անըմն էլ տինում ա Թնուլան:

Տնվիթը ամման օր նինում ա Թնուլանին քինում քուլը ավի, ըս-տեղ էլ ըսկսում են զրոնց անելը, ընդենց որ մերն էլ ա գիղում չի Թնուլանի խոսալի սըռը:

Թնուլանին ո՛չ ջլավն էր պետքը, ո՛չ էլ դնմչի: Հերիք էր, որ Տնվիթը մին պան ասեր, քամու մնան պոք էր կնլիս տեղիցը հու աչկի մին ճըպպոցումը հըսնում ուզած տեղը: Մին անքամ էլ ըստենց ավի էին քինացած ինում, եփ Տնվիթը մին նախշուն քար ա քըթ-նում: Հս քարը ուրիշ քարերի մնան չի ինում, ականակիր մթան մե-չին ընհենց ա փըսպղում, ընհենց ա լիս տալիս, ասես աստղը ինի: Տնվիթը Հս քարն առնում ա, պերում տուն: Ավաղանլըղը Հն սհաթին չրաղվան ա տնոնում: Տո՛ւ մի ասիլ, հենց Հտ օրը երգրի թաքավո-րը մեռած ա ինում, ամման տեղ խնքնր են ղըրկած ինում, որ սուք պահեն, ոչ մին լիս վառեն ոչ, պայց դե Տնվիթը չոլի մարթ էր, Հտ մասի շտեղա՞ն գիղար:

Ամման քո՛ւնջ ու պուճախումը ղարավուլ են տիրած ինում, որ տենան՝ ով ա ոխակ անում թաքավորական հըրամանքը փոզըմիչ անի: Հենց առաջին քչերը իմաց են անում թավաղին, թն՝ բա ասիլ չես, ավչի Տնվիթի տանը լիս ա վառվում:

Փըռնում են Տնվիթին, տանում Հս թավաղի կուլտը:

—Ա՛ղան լակո՛տ, լակոտի՛ մինը, տո՛ւ Հտ ոնց ես ոխակ արել, սքի վախտը լիս ես վառել քու բարբաղումը,—հըսվում ա թավա-ղը,—բա գիտում չես որ ըտրա մհար կլթխըտ կըկըտրեմ:

—Ես մին ախկաղ ավչի եմ,—ջուղաբ ա տալիս Տնվիթը,—Հն ղըղնր ախկաղ, որ իմ տանը ո՛չ ճրաք կա, ո՛չ էլ մուճ, արևի հետ զնրթնում եմ, հավերի հետը թառ ինում, ինձ ճրաքն ո՞վ ա տվել, որ հնլան վառեմ էլ:

Թավաղը վհատում չի, դուլլուդչիներին ղըրկում ա տունը օբիսկ անիլի: Դե ընդանք էլ քո՛ւնջ ու պուճախ չեն թողում, քըրքըրում են, ման են կնլիս, համա ո՛չ ճրաք են ճարում, ո՛չ մուճ, պայց վեր են ունում Հն փըսպղին տվող քարը:

Թավաղը հենց որ տեսնում ա քարը, մատը կծում ա, թն կա, կա ոչ, լիս տվողը հենց էտ ա իլել: Կարքատորը ա Տնվիթին մին քանի ոռզգի տան, ինքը քարը վեր ա ունըմ, վազ տալի ջնհիլ, նորընծա Թաքավորի կուչտը:

Թաքավորը չատ ա ուրխանըմ, եփ տեսնըմ ա էտ լիս տվող քարը:

—Տն չիմմիցը հըվաղարիմ Թավաղըս ես,—ասըմ ա,—Համա էս կո՛ւճի քարովը ինչ անեմ: Ինձ էս քարիցը էնքամ պետկ ա պերես, որ մին լնզգնթին ամարաթ չիսեմ: Թն պերար, Թաքավորին վայել քեզ կշահեմ, Թա պերար ոչ...

Ոսկը պրծած ոչ, Թավաղը ծունգը ծալըմ ա, թն՝ Թաքավորն ապրած կենա, ինձ մին քիչ վախտ տու, կըպերեմ:

Թաքավորը Թավաղին մին ամիս մնջնլ ա տալիս, Թավաղըս էլ թնւլ քինըմ ա Տնվիթի կուչտն ու ասըմ՝ էն, ինչ Թաքավորն ուրան ա ասած ինըմ, վերչըմն էլ ավելցընըմ ա.—Փախնիլի մասի մտածես ոչ, ասեղի ծակն էլ մըննես, ճարիլը վեմ: Քեզ էլ, մորըտ էլ կըմորթեմ, կաշինիտ տիկ կըհանեմ, տունըտ էլ կրակ կըտամ:

Ինչ աներ հեխճը: Ծին գիհարըմ ա, նինըմ, ընգնըմ սար ու չո՛ւ՝ փրսպըղան քար ճարիլի: Ման ա կնլիս, չատն ու քիչը ինքը գիղն, Համա ոչ մի պան կարըմ չի ճարի: Քոռ ու փոջման ետ ա տնոնըմ: Դիլխորութունիցը երկու կաթ արտասուընք ա ընգնըմ ծխան յալին: Ծին կաղնըմ ա, կլոխը շուռ տալիս հու հըրցընըմ:

—Ոխ՞ ես լնց ինըմ:

—Բա ո՞նց լնց չիսեմ,—ասըմ ա Տնվիթը հու պատմըմ ա ուրն դարդը:

—էհ, ես էլ ասեմ դարդըտ ինչ ա,—ասըմ ա Թնուլանը,—յալիցըս դայի՛մ փրոնի, ես քե կըտանեմ ընդեղ, շտեղ էտ քարերին թիվ ու համընթը չըկա:

Հըսնըմ են մին ծո՛ր, տեսնըմ են էտ խոր ծո՛րը ալավ-ալավ ա անըմ:

—Տնվիթ ջան,—ասըմ ա Թնուլանը,—քու ուզած քարերը հենց էտ ալավ-ալավ անողնին են, քինն քու էտ Թավաղին ասա՛, թո կն, տանի լցնի ծակ աշկը:

Էքսի օրը Թավաղը օխտը հարիը ճորուց, օխտը հարիը ծխանից, օխտը հարիը էլ եզանից մին քնրվան ա չինըմ, ղըրկըմ էտ ծո՛րը: Համա Թնուլանը Թա մին աշկի ճըպպոցըմն էր հըսել տեղ, քնրվանը օխտը չափնթ օրը-քչեր քինըմ ա, քինըմ մինչով հըսնըմ ա ծո՛րը, անկին քարերիցը պեռ փըռնըմ, օխտը չափաթըմ էլ օրը-քչեր ետ ա կնլիս:

Թաքավորը էտ քարերիցը մին դանշանգ ամարաթ ա չինըմ, որը ընըհենց ա փըսպըղըմ, որ չհանըմը էլ լիս վառիլը պետկը չի ինըմ:

Թաքավորը բոլ-բոլ փեչքեչնի յա տալիս թավադին, իսկ Տանկի-թին ոչ մի պան էլ ա հըսնըմ չի: Ինքն էլ ոչ մի պան ուզըմ չի, փեչկը քաշըմ ա, քինըմ տուն, ըսկսըմ առաչվա պես ապրիլը:

Մին անքամ էլ Տանկիթը բոլըղանը բոլըղ մին չոլի կատու յա սպանըմ: Ընդրա նախշուն մորթին հանըմ ա, ավչինների սովորութ-կի գորա կախ տալիս օթադի տըռնիցը: Չիմմը, ով անց ա կենըմ քոչուկը, մանթիւ ա մնըմ, կըլխի յա ընգնըմ, որ էտ տանը անըմ հա-նած ավչի յա ապրըմ:

Մին օր էլ սևասիրտ թավադն ա անց կենալիս ինըմ, տենըմ ա էտ նախշուն մորթին, ուրա գյադոցը հրամանք ա տալի, թան՝ էտ քասիբի ըոխի կերակուր չի, տարեք մեր տուն: Ինքն էլ մորթին տանըմ ա թաքավորին փեչքեչ:

Թաքավորի պալատիցը թավադը ետ ա կալիս թազա հրաման-քով:

—Տանկիթ, —ասըմ ա, —տո՛ւ պետկ ա սըհենց հարիւր կատվեք սպանես, որ ընդանց մորթուցը թանգա պալատի մհար մին գանթ կարեն: Թան հրամանքը կադարես ոչ, չլինքիցըտ քանդիւր կապած ծառիցը կախ կըտամ:

Տանկիթը ուրա հըրեղեն հընգերին պատմըմ ա թանգա դարըր:

Թանուանը ընգնըմ ա մըտկի տունը:

—Ես գիղըմ եմ, —ասըմ ա, —էն թաքուն անպոլի տեղը, շտեղ վըհաքվըմ են էտ կատվեքը ճոլը խմիլի: Մինակ ընդանց մոտ քինանլ չի ինըմ, սաղ-սաղ մարթ են ուտըմ: Համա սըրտենդի՛լ մի, հարգա-վոր ա անպոլի մեչ լըցնիլ քառսուն տիկ օխտը տարվա կինի, էն վախտը կատվընին հենց որ խմեն, կըհանրփեն, վե կըտանոնան, տո՛ւ տղա ես վհաքի:

Տանկիթը կալիս ա թավադի կուշտը, վեր ունըմ օխտը տարվա քառսուն տիկ կինի, քառսուն էլ ազըրայիլ տղեք, էքսի օրը պերըմ ա կատվի մորթիքը՝ մինը-մինիցը նախշուն, մինը-մինիցը լանլ:

Թաքավորը թավադին թանգան փեչքեչ ա տալիս, իսկը Տանկիթին մըտենին էլ ա քցըմ չեն: Համա ասեղը կարալ չես տուպ-րակըմը կանես: Մարթիք կըլխի են ընգնըմ, թան ով ա քարերը ճա-րե, ով ա կատվուցը հախիցը եկել: Սաղ ախշարքովը մին թև առած թըռնըմ ա ավչի Տանկիթի, ընդրա հըվադարիմ Թանուանի անըմը:

Թավադը հենց որ լըմ ա էս պանը, նախանձուլթունիցը քիչ ա մնըմ ճաքի, մտածըմ ա, թան ոնց անի, Տանկիթի կլոխը խանձի: Շատ որ փիքըր ա անըմ, ճարը քըթնըմ ա:

Քինըմ ա թաքավորի կուշտը հու ասըմ ա.—Արևըտ համանչան լիս տա, թաքավո՛ր, քու անըմը ախշարքի պերանն ա ընգել, քու քոչք ու սարայը ախշարքի աշկն ա մտել, մորթոցիցը կարած գանբեն շատերի քունն ա կըտրել, միան մին պանն ա պակաս: Քու օղորմածիկ հերը էտ պոլորի մասի տեղակ չի: Հըրամանքըտ մին խանբար դըրկի քու փառավոր կոռծերի մասի: Լիւսահոքին շատ ուրախ կինի:

Թաքավորին տուր ա կանլիս թավաղի ասածը:

—Լանվ միտկ ա, թավա՛ղ, նամակն էս սըհաթիս կիրիլ կըտամ, համա ո՞վ ա տանիլու:

—Ուրիշ էլ ով: Ավչի Տնվիթը կըտանի:

Քարը քցըմ ա գոլը: Դե, Տնվի՛թ տղա, կարըմ ես՝ եկ հանի՛:

Թաքավորը կանչիլ ա տալիս Տնվիթին.—Թան հըրամանքըս կաղարես ոչ, մինչու վիզըտ քե թաղիլ կըտամ հողի մեչ, որ ալոեմ-նին աշկերըտ տո՛ւս տան: Քե տալիս եմ իրեք օր մանջալ, քինա մը-տածի՛, ես էս ա նամակը կիրիլ եմ տալիս:

Ինչ աներ Տնվիթը: Նինըմ ա Թանուանին հու ուրան տալիս չոկե-րովը:

—Ախպե՛ր ջան,—ասըմ ա Թանուանը,—ոչ ով քե կարալ չի օքնի հողածինիցը գո՛ւման: Էն էլ եսիր ա մարթակելի ծեռին: Թան կարանք մարթակելին ըսպանենք, հեն ա հողածինը սիպտակ չոչանից կըտանոնա թանգան Շոչան ախճիկ ու մին պարի խո-րուրթ կըտա:

Ճընապեն երգեն ա ինըմ: Ով քինացած ա ինըմ էտ ճընապո-վը, ետ եկած չի ինըմ, ըտա մհար էլ գեղան-գանլմազի ճընապա են ասըմ: Համա Թանուանը ընդհենց ա թոնըմ, որ ոչ ով ընդրա նալը կարըմ չի տենա: Օխտը սար են անց կենըմ, օխտը ծո՛ր, օխտը կետ են կըտրըմ, օխտը ծմակ, էդո հըսնըմ են օցերով լիքը մին դարամի:

Հենց էս դարամիցը տո՛ւս ա պըրծընըմ մարթակելը, մին աժդա-հա ջանավար: Քթիցը մուխ հանիլով վրան յա պըրծնըմ Տնվիթին, համա Տնվիթն ուրան կորցնըմ չի, հանըմ ա հորական դամալթին ու մարթակելի թնթը կըտրըմ: Մարթակելը ցավիցը ղնջղնջըմ ա, ուզըմ ա փախնի, համա գյուլիցը հուր էր փախնիլու: Տնվիթի գյուլեն հըսնըմ ա աժդահի ջիգյարին ու նափանսը տեղն ու տեղը կըտրվըմ ա:

Էն սըհաթին սաղ թիլիսիմնին փոզըմիշ են ինըմ: Օցի դարամեն տանըմ ա մին ծախկած չո՛ւման, կոխկի քերծի կլիսին իրեմըմ ա ինքը՝ հողածին Շոչանը, մին նախշուն, մին մարալ, նորած լիսնյակ մին ախճիկ: Ընգնըմ ա ուրան փըրգողի խտիտը պըչպըչորըմ ա, էդո նըստըմ ա Տնվիթի թանքին ու հայդա դըբան տուն:

Տանը խորուրթ են անըմ:

Շողանը Տնվիթին ասում ա.— Դարդ մի՛ անիլ: Թաքավորիցը նամակը վե կունես, թաքուն կրպերես տուն: Թնքճն ընդենց կանես, որ ոչ ով ճրնապին քե տենա ոչ:

Տնվիթը թաքավորիցը նամակը վեր ա ունում, քինում ծմակը, հենց որ մթինն ընգնում ա, թաքուն կնլիս ա տուն: Շողանը թաքավորի նամակը հըրմ ա, եղո ջուղարը ուրն ծեռովը կիրում: Էքսի քըչերը, եփ չիմմը քինած են ինում, Տնվիթը թնգանդան քինում ա քոլը, ընդեղից էլ թող թաքավորի պալատը:

Թաքավորը նամակը պնց ա անում, կարթում: Իչքան կարթում ա էնքան իրեսի ոննգը-ոնչտը պացվում ա, հենց որ հըսնում ա վերչին թառանչ ա քաշում:

— Էտ խի՞ թառանչ քաշար, թաքավորն ապրած կենա, — հըրցնում ա թավաղը:

— Լիսահոքի հերըս չատ ուրախ ա, որ ես լնվ եմ, համա խընթրում ա, որ քե ղըրկեմ ուրն կուշտը, — ասում ա թաքավորը, — որ դողն ասեմ, քե մնան թավաղից ծեռք քաշիլը տըժնր ա, համա հորըս կամքը ինձ մհար օրենք ա: Տող հենց ըսօր ճընապա կընգնես դըն էն աշխարքը: Հերըս կիրում ա, որ ինքը մինակ ա, կարում չի յուլա քինն առանց քու իմաստուն խորուրթների:

— Ուզում չեմ, ուզում չեմ, — ծըկըլթում ա թավաղը, — ես ոնց ճաբեմ էն դողնի ճընապեն, կարալ չեմ...

— Օրթըրված հերըս էտ մասի էլ ա մըտածել, — ասում ա թաքավորը, — կիրում ա, որ հրամանք տամ կլոխըտ կտրեն, հենց էս ընդուն կըհըսնես հորըս կուշտը:

Ասիլն ու չար թավաղի կլոխը կտրիլ տալը մին ա ինում:

Հըրեղենի հու հողածինի քնմագով Տնվիթը փըրգվում ա, թիթևացած սրտով ետ ա տառնում տուն:

Ասում են եղո փսակվում ա հողածին Շողանի հետ, պայց ես սըրտիս մեխկ չեմ անիլ, դողն ու սուտը գիղում չեմ, ո՛չ հըրսընքին եմ իլել, ո՛չ էլ կինի եմ խմել: Ինչ գիղում չեմ, գիղում չեմ: Ասսանա էն ղըղար խնձոր վե ընգնի, որ չիմմիս էլ հըսնի: